Հավելված N 4
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 26-ի N 1867 - Ն որոշման

ՇԱՀԱՌՈՒ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ*

Խնդրում ենք ճանաչել _____ կազմակերպությունը ՀՀ կառավարության 2023 թվականի _____ -ի _____ -ի N_____ որոշմամբ սահմանված միջոցառման շահառու:

Կազմակերպության մասին հայտնում ենք հետևյալը՝

1) ընկերության անվանումը, հիմնադրման տարին.

2) գրանցման և փաստացի գործունեության հասցեն (եթե տարբերվում է).

3) էլեկտրոնային փոստի հասցեն.

4) հեռախոսահամարը.

5) գործունեության տեսակները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի.

6) արտադրանքի (ԱՏԳ ԱԱ 4 նիշ ծածկագիր) իրացման ծավալները՝ ըստ տարիների, շուկաների.

7) հայտին առնչվող հարցերի պատասխանատուի կոնտակտային հեռախոսահամարը.

8) եթե հայտատուն ընկերությունների խմբի մաս է, ապա խմբի բոլոր մասնակիցների վերաբերյալ 1-ից 5-րդ կետերում նշված տեղեկությունները.

9) հայտատուի և խմբի (կիրառելիության դեպքում) բաժնետերեր (մասնակիցներ)՝ ըստ բաժնետոմսի (բաժնեմասի).

10) հայտատուի կամ խմբի վերջնական շահառուների անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, բնակության հասցեն.

11) արդյո՞ք հայտատուն (կիրառելիության դեպքում խմբի անդամներից որևէ մեկը) ցուցակված է որևէ ֆոնդային բորսայում: Եթե այո, ապա ո՞ր թվականից և ո՞ր բորսայում:

Հայտին կցվող փաստաթղթերի ցանկը

1) նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունները (առկայության դեպքում).

2) ներդրումային ծրագրի ֆինանսավորման աղբյուրների հասանելիությունը հիմնավորող փաստաթղթերը.

3) հայտատուի հիմնադիր փաստաթղթերը.

4) հայտատուի իրական շահառուների[1] վերաբերյալ ներկայացված տեղեկություններ.

5) հայտատուի նկատմամբ սնանկության վարույթի բացակայությունը հաստատող փաստաթղթեր.

6) հայտատուի՝ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալը հաստատող փաստաթղթեր.

7) հայտատուի՝ N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանության մասին հայտարարություն՝ ստորագրված վերջինիս գործադիր մարմնի ղեկավարի կողմից.

8) հայտատուի գրավոր համաձայնություն՝ տարեկան անկախ աուդիտ անցկացնելու (կիրառելիության դեպքում ներդրումային ծրագրի իրականացման նպատակով իր կողմից ստեղծված իրավաբանական անձում) և դրա արդյունքները նախարարությանը տրամադրելու վերաբերյալ:

[1] Լրացվում է՝ հաշվի առնելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին» օրենքով սահմանված՝ իրական շահառու ճանաչվելու հիմքերը:

* Սույն ձևի բոլոր դաշտերը պարտադիր են լրացման համար, սակայն տնտեսավարող սուբյեկտները չեն սահմանափակվում միայն առաջարկվող դաշ-տերով:

Ղեկավարի պաշտոնը _____

Ստորագրություն _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ